

կանացած չէզոք ածականը « τὸ χύριον » կը նշանակէ գլխաւոր , վերջին և որոշ վայրկեանք . ուստի ամէն ինչ կ'առաջնորդէ մեզ հաւատալու թէ ինչպէս « տիրական » ածականն յունարէն « χύριος, α, ον »-ի զանազան նշանակութիւնները կ'ընդունի , այսպէս նաեւ լոբեկայն հասկցուած « տիրական » ածականը կը համապատասխանէ յունարէն « ἡ χυρία »-ի կամ « τὸ χύριον »-ի (որովհալ օրը) ժամանակի առումին մէջ :

Վերջ ի վերջոյ կը դիտեմ որ « սահմանել » բայը որ կ'ուզէ ըսել յատկապէս սահման մը դնել, սահմանել, որոշել, վճռել, ընդհանրապէս կ'ընկերանայ տեղը կամ ժամանակը ցուցնող բառի մը . բայց ցցուցինք թէ անկարելի է տեղոյ յիշատակութիւն ըլլալն՝ ուստի նաեւ այն բայը որ կրնար մեր ապացուցանելիքին միակ դժուարութիւնն յարուցանել, անոր յետին ապացոյցը կ'ըլլայ :

Տարթոր ԵՐԱՆԱԼԻ ԱՄՈՅ

Թրգմ. Հ. ՏԻՈՒԹԻՍ ՏԻՐ-ԿԻՒՆԵՍԷ



Ո Ի Ղ Ղ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ե Ղ Ի Շ Է Ի

Իջ 5. « Բանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ . վասն Հայոց պատերազմին հրամայեցեր » : Եղիշէի սկըսուածը յարստաբան մ'է Ղուկասու « Գործոց Առաքելոց » և « Աւետարանի » նախաբանութեան . ուստի նախնական երկաթազրի ձեռագրից յետագայ ընդօրինակողն ի բաց թողեր է սկզբի զարդազիրը « 2 » . յորմէ ունինք այժմու սկսուածը « Բանն վասն որոյ » : Աւետիք Էնֆիսանեանի ձեռագրաց մէջ պատահեցի նաեւ Եղիշէի պատմութեան բոլորագիր ձեռագրի մը որ սկսում էր « զբանն վասն որոյ » : Այդ ձեռագրի մէջ, որը Ուսուչ . Ֆինք գնեց գերմանական մի համալսարանի համար՝ կարելի է ստուգել իմ տեսածը :

Իսկ ո՞ւմ խնդրանք զրա՞ծ լինելուն բնաւ

տարակոյս չի պիտի ունենային, եթէ այժմու քննադատութիւնը « շարժման է ի շարժումն չտագնապէր զամենեւին » : Բարեգեի Պրոֆ. Գր. Խալաթեանը ուզում է ապացուցանել որ ոչ թէ Դաւիթ երիցու Մամիկոնեանի խնդրանք այլ Դաւիթ Անյաղթի սիրոյ համար զրա՞ծ լինի : Որովհետեւ Եղիշէ կը կոչէ իրեն հրամայողին « ո՛վ մեծդ ի գիտութեան . . . որ դեգերեցին յիմաստութիւն » . ուրեմն այդ մեծ տիտղոսները և գովաստները աւելի կը յարմարին Դաւիթ անյաղթ փիլիսոփային , հռչակեալ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ , և այդքան հեղինակութեան յառաջ կը խոնարհի Եղիշէ , և իսկոյն ձեռք կ'առնու զրէջը ասելով , « ոչինչ դանդաղեալ վեհերեցաք , հայեցեալ ի մեր տղատարիս » : Սակայն այս պատճառաբանութիւնը , եթէ չեմ սխալի , ոչ միայն համարիչ չէ , այլ և բռնազբօսեալ :

Թարգմանչաց առաջին և երկրորդ դասու աշակերտը բոլորը կուսակցոն եղած լինելու են . իսկ ո՛վ աշխարհիկ կարգ մտել է , նորան չեն մոռանար յարել իսկոյն « երէց » բնորոշիչ բառը : Դաւիթ Անյաղթ չեմ յիշեր որ մի տեղ « երէց » կոչուած լինի , իսկ ուր բացայայտ կոչումն կայ և պատմական անձ մը՝ իւր տիպարով հասեր է մեզի . կը հետեւի ուրեմն Դաւիթն , որոյ խնդրանք Եղիշէ կը զրէ , երէց էր , և երկրորդ՝ ազգի անուճով յիշուած՝ Մուսիկոնեան , չէր կրնար Դաւիթ անյաղթը լինել , քանի որ չկայ ոչ մի յիշատակութիւն սրա երէց և Մամիկոնեան լինելու մասին , կարելորդ կէտեր՝ որոնց մասին չպէտք է մոռանային խօսելու նրա կենսագրիւնը :

Եղիշէի՝ Դաւիթ հասցէին ըրած խնկարկութիւնը չպէտք է շփոթել յարգելի գիտնականի յատկ միտքը , քանի որ Եղիշէ գովում է Դաւիթ՝ ոչ մարդկային՝ այլ երկնաւոր գիտութիւնը . իսկ իւր ազդեցութեամբ

1. Հուգ. Փոսկ. տաղք Գերեզմ. 15 :

2. « Հանգես Ամսօրհայ », 1906 :

թիւնը կը խոստովանի, համեմատութեամբ երկցու խոնարհութեանը, որ իրեն համահաւասարին խոնարհելով՝ կը բարձրացընէ զնա խնդրելով զրեւ Հայոց պատերազմի պատմութիւնը:

Եթէ մանր միտ դրուի Եղիշէի այս պարբերութեան « Այլ դու, ո՞վ մեծդ ի գիտութեան » . . . մինչև « Եւր սուրբ միաբան օգտից » . Ինքն ըստ ինքեան մի յայտնի ապացոյց եւս կը ստանանք Մամիկոնեան երկցու խնդրանօք և ոչ Դաւթի անյաղթի զբաժ լինելուն: Բայց հարկ համարիմ մի երկու կիտաղրութիւնք փոխել և երկու բառեր ուղղել:

Առաջ ասացինք որ « ով մեծդ ի գիտութեանն Աստուծոյ » շատ կարելի է Անյաղթին չվերաբերի, այլ առաքինի և սրբակրօն երկցուն: Երկրորդ Եղիշէի հարցմունքէն կարելի է գուշակել որ շահագրգռուած մէկն է խնդրողը, և կարծես մարմնաւոր փառասիրութենէ դղրուած, որ հակասում է աշխարհէ հրաժարած հոգւոյն, որ միայն Աստուծոյ սիրով վառուած՝ անարին ճպաւանց օրինակին մարմնով կ'աւարի յայշարհէ: Մամիկոնեան տոհմին պատկանող մի անձի կը յարմարի Եղիշէի ակնարկութիւնը: Եւ յիշատի իւր զարմանքը կը փոխէ և կասկածը կը փարատէ, խնդրող անձի և նրա նպատակի մասին, աւելի իմն բարձրացնելով նրա վարքը, որ ոչ թէ մարդկային մնտոի կրքից և փառքից դղրուած ցանկացել է ունենալ զրով « զառաքինեաց զգալութիւն և յետս կացելոց զվատթարութիւն » որ մարմնաւոր կողմանէ բնաւ կարօտութիւն չունէր « երկրաւոր առատ գիտութեան լըման », այլ այդ հետաքրքրութիւնը, այդ ստիպումը յառաջ է գալիս աստուածային սիրուց, որ յատուկ իմն է քրիստոսասէր մարդկան: Ուստի իրաւամբ շարունակում է Եղիշէ. « Որպէս երեւի ինձ և քեզ և այնոցիկ որ ղեգերեցին յիմաստութիւն երկնաւոր՝ սիրոյ է նշանակա այս, և ոչ երկրաւոր փառասիրութեան »: Ուրեմն Դաւթի երէց Մամիկոնեան կրնար խնդրել ի սիրոյ, և ոչ փառասիրութեամբ գրելու իւր

տոհմի քաջագործութիւնը . Իսկ Դաւիթ անյաղթ, կրնար իւր մեծ գիտութեամբ խնդրել զնոյն, ոչ սիրոյ պատճառաւ, և ոչ մեծամտութեան կամ փառասիրութեան համար, որովհետեւ Մամիկոնեան տանէն չէր: Եւ վերջապէս Եղիշէից խնդրողը ոչ միայն հաւանականաբար, այլ և շատ բնական է որ Մամիկոնեան մի երէց լինի, քան թէ բնագանցական գիտութեամբ յափըշտակուած միտք մը, որ իւր խոր գիտութեամբ կը զտնէր իւր սրտին միսթաւութիւն: Որովհետեւ Մամիկոնեան տոհմի բարձրաբեւոյժ և ուռնասաղարթ ծառը, ճղակցոտոր և կարկտահար եղած էր, հարկ էր սրտապնդել, սփոփել և յուսադրել մնացեալըը որոնք դառն փորձութեանց և տանջանաց մատնուած էին: Նորա այլ եւս մարդկանէ յոյսերնին կտրել էին, և միայն Աստուծոյ սիրով պիտի կարենային համբերել հասած նեղութեան, և օրինակաւ տոհմի նահատակներու՝ շարունակել հաւատքի կոիւր և պատրաստ զանուիլ զհուել քրիստոնէական կոտորի համար: Այս և աւտը նման զգացմունքներով ոգեւորած Դաւիթ երէց դիմում է Եղիշէի արձանազրել ատտիկեան զրչով իւր տոհմակից սիրելեաց, քաջ նահատակաց գործերն և մարտիրոսութիւնն: Այդ զգացմանց թարգման կարծեմ լինել Եղիշէայ հետեւեալ խօսքերը. « Զոր և մեր ընդ հրամանին ըսմ ընկալեալ յօժարութեամբ՝ ձեռնարկեցաք զայս ինչ, որ է միախորաքիս սիրելեաց, կամակարութեամբ յարձակեալ ի վերայ մահուան »: Եթէ ուրեմն այս տողերը կրնան բացատրապէս յարմարիլ Մամիկոնեան տոհմի որեւոյն, արանց և կանանց որք էին ի մեծի ճգնութեան, կը հետեւի ուրեմն որ Դաւթի երկցու Մամիկոնեանին խնդրանօք Եղիշէ ձեռնարկեր է զրել իւր պատմական վէպն: Զայս հարեանցի յիշելով, և թողլով հետազոտից ասել աւելին. ես կ'անցնեմ մի քանի դիտողութիւնք անելու ընթերցանութեան և բառերի մասին:

Ի՛շ 6. « Յայսմ յեօթն գլուխս կարգա-
գրեալ և եղեալ ծայրալիը պարապմամբ » :
— Առաջարկում եմ կարդալ . « կարգա-
գրեալ և եղեալ ծայրալիը փարպատմամբ » :
Նախ ասացի որ Ղուկասու հետեւած է . ուս-
տի հոն ասում է աւետարանիչն « կարգա-
գրիչ քեզ » . — Իսկ երբ առաքեալը հրա-
շիւք ձուկն որսան որ ծայրալիը լցուած էր՝
ուռկանն « պարպատեր » . — Այսպէս նաեւ
Եղիշէ իւր պատմական վէպը խոստանայ
թէ՛ կարգաւ գրել և թէ՛ լի և հոծ մանրա-
մասնութեամբը :

Ի՛շ 7. « Քանզի բազում ինչ է սրբու-
թիւն՝ սատար լինել անօտութեան, որպէս
աղօթք՝ գիտութեան, և սէր սուրբ՝ միա-
բան օգտից » : — Առաջարկում եմ կար-
դալ . « սատար լինել անուսումնութեան .
... և սէր սուրբ՝ միաբան ուխտից » : —
Մեր ուղղած բառը ծանօթ է հեղինակին
տես էջ 197 « ... և ողորմեցաւ մերում
անուսումնութեան » ... եւս էջ 25. տ. 16.
եւս էջ 59. տող 16. իսկ « Միաբան ուխ-
տից » . Հմմտ. էջ 14. տող 14, եւս 100
տող 17. եւս 165 տող 15 :

Ի՛շ 7. տող 18. « Առաջի տեսանելով
զգօրազուրիւն յաղթութեան, որ ոչ ումեք
ոտնհար լինի թշնամութեամբ, այլ անդ
ուսուցանէր զիւր անպարտելի զօրու-
թիւնս » : — Ինձ թուի կարդալու է
« ... անկոտտ ցուցանէ զիւր անպ ... » :
Եթէ զօրականը իւր աչքի յառաջ տեսնայ
զօրավարին որ կամակարութեամբ կը յար-
ձակի թշնամույ վերայ, որոյ վերայ ան-
պայման վստահութիւն ունի՝ անշուշտ յաղ-
թութիւն տանելուն, այդ տեսիլը, իրա-
խուսանքը քաջաբար դէպ ի կոխ խոյա-
նալը անդոտտ զնա կը լեցնէ նոյն եռան-
դեամբ և կը տանի ետեւէն անահ և աներ-
կիւղ ճակատելու թշնամույ դէմ : Եթէ այդ
զօրավարը ոտնհար չի լինի թշնամեաց՝ ու-
րեմն նովին ցոյց կու տայ իւր անպար-
տելի զօրութիւնը :

Ի՛շ 26. տող 2. « Այսպէս մեծ է տե-
սաւորութիւն մտաց քան զմարմնոց » : —

Ուղղ. « քան զմարմնոյ » . քանզի նախըն-
թաց համեմատութիւնը այդպէս պահանջէ :

Ի՛շ 26. տող 24. « Այլ զանցս իրացն
պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղե-
ցիան էանց, և ոչ դանդաղիմ . ոչ բարա-
սասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս
իրացն ասելով ոչ լռեցից » : Հակամէտ եմ
կարդալու « և ոչ գտեղատիմ բարասասեք
մտօք, և այլն » : Եղիշէ ըստ քրիստոնէա-
կան կրօնից ասէ չունիմք հրաման բաւ-
բասել զիրխանս, և ոչ գովել զանոնք որ
աստուածամարտ կը լինին . ուստի Յազ-
կերտի հասուցած չարիքներ պատմելով՝
սուրբ եկեղեցւոյն, նա լոկ ճշմարտութիւնը
կամի ասել և ոչ թէ գտեղատի բարա-
սասեք մտօքով . « այլ ճշմարտութեամբ զելս
իրացն ասելով » :

Ի՛շ 29. տող 23. « Պատրէր զոմանս ի
նոցանէ ոսկով ... և այլ եւս անոտի յոյս
ոգոցն առաջի դնէր » . — Առաջարկում եմ
կարդալ . « և այլ եւս անոտի յոյս մոգոցն
առաջի դնէր » : Յազկերտ իրեն միայն նը-
պատակ դրել էր զՀայս Մոգութեան կրօ-
նին հպատակեցնել, ուստի այլեւայլ հնարք-
ներ բանեցնելէն զվնի, այսինքն այն մի-
ջոցներով զոյս կը թուէ Եղիշէ՝ մեծամեծ-
ներին կը խաբէր, այդ ամենի վերայ ա-
ռելի իմն մոգութիւն ընդունելու յոյսն ալ
առաջի դնէր . ու այսպէս շարունակ յոր-
դորում և հրապուրում էր նախարարնե-
րին « եթէ միայն զօրէնս մոգութեան յան-
ձին կալլիք » էջ 31. տող 14 « և ի վե-
րայ այսր ամենային և զմոգութեան եւս
օրէնս կատարելով, զի մի՛ ինչ ամենեւին
պակաս առնիցեն » :

Ի՛շ 35. տող 21. « Իբրեւ ոչ կալան
յանձին ... այլ տանալ զինեօքն յաւելոյր ի
տաճարին զխրախութիւն » . — Յազկերտ
հրամայում է առատ ընթրիք պատրաստել
« աւելի քան զաւուրց սովորութիւն » ուր
պիտի կոչուէին քրիստոնեայ զինուորա-
կաններէից շատերը : Երբ քրիստոնեայք զո-
հեալ միս չուզեցին ուտել, թագաւոր
« ոչինչ կարի ստիպեաց » . — խորաման-

կույթեամբ թագնեկու համար իւր ապա-
գայ չար դիտումը՝ հրամայեց տալ անոնց
« զսովորական կերակուրն »։ սակայն հարկ
էր ուրախացնել տաճարը, չարգիւթալ
գինին հրամայեաց առատորեւամբ խմցնել,
ուստի առաջարկում եմ կարդալ « այլ ա-
ռաւել գինեօրն յաւելոյր ի տաճարին զխա-
խութին » — և կամ « այլ խառնեալ
գինեօրն » պայմանաւ եթէ « առեալ գի-
նեօրն » չունենայ նոյնպիսի նշանակու-
թիւն »։

Էջ 50. տող 21. « Սոյնպէս և յայն-
ժամ ... մարդկան և հրեշտակաց՝ և տե-
սակնն և որ ի տեսակին լինելոց էին »։
Թուի « ուղղելի մարդկան և հրեշտակաց
են տեսակքն և որ ի » ...:

Էջ 69. տող 1. « Եւ բազումք ահա-
բեկեալք սկսան զրաճել պնդապէս »։ Ի՞նչ
կը նշանակէ « զրաճել »։ զինուել արդեօք.
բայց այս տեղ հակառակ է իմաստին և
բնագրին։ Նամակը հասնելով արքունիք՝
ոմանք կը գովեն, թէպէտ կը վախենան
բայց ծածուկ իրարու մէջ նոյն գովութիւնը
կը խօսին մէկմէկու, և նոցա զարմանքը
ոչ թէ ճարտարաբանութեան համար է,
այլ առաւել համարձակութեան։ Ուրեմն տո-
ցա հակառակ « և բազումք ահաբեկեալք »,
նոցա սկսան ոչ գովել այլ « զրաճել »։
այս բառին հարկ է ընծայել մի նոր իմաստ
վատարանելու, զրախօսելու, բամբասելու,
որպէս զի հաճոյանան Յազկերտի։ Սոքա
անշուշտ ապագայ ուրացող նախարարնե-
րից էին, որոց դուր եկած չէր նամակի
համարձակ լեզուն։ Մինչ Յազկերտ յա-
կանէ յանուանէ կոչէ ի դուռն Հայոց նա-
խարարները, արդէն « Կէսքն առ նմա էին
ի կարաւանին » էջ 71. տող 3։

Էջ 91. տող 1. « Թէպէտ և ոչ իցեմք
բաւական ասել զամենայն չարիսն, որ
անցք անցին անդէն ի կարաւանին ընդ
գունդն Հայոց »։ — Թուի ուղղելի « որ
անցուցին անդէն ի կարաւանին »։

Էջ 99. տող 15. « Եւ անդ էր տեսա-
նել զմեծ աղէտ տարակուսին ոմանք զգե-

րարտօսքն իրր յաղբերականց հոսէին յա-
չաց իւրեանց »։ — Տարակուսելի Թուի
թէ ինչո՞ւ Եղիշէ « զեղբմ արտօսքն » փո-
խանակեր է « գերարտօսքն » ու, Եթէ իրրեւ
աղբիւր հոսում էր աչքերից արտասուքն
կարելի էր ասել յորդ կամ առատ. իսկ
« գեր » մակդիրը չունի նշանակութիւնն։

Էջ 100. տող 3. « Բազում անգամ
աղաչէր զօգնական իւր զի ի մահուանէ...
հասուցանել »։ Կարծեմ պէտք է կարդալ
« զգորսկանն »։ Ձի մոզպետն իւր մոզե-
րով չարաչար ծեծ կեներ էր, որով նո-
ցանէ օգնութիւն աղբիւր հեռու էր մտքէն.
այլ նա դիմում է վասակայ և ընկերաց,
որպէս զի մահուանէ ազատելով հասցնեն
ի Պարսկաստան։ Նա ստիպում էր զնոսա
և ասէր. թող գրեմ և ցուցանեմ մեծ թա-
գաւորին. ուրեմն եթէ կրնար ստիպել,
կարէր և աղաչել զնոսա այսինքն զգորա-
կանն ապրեցուցանել մահուանէն։

Էջ 100. տող 18. « Ձի եթէ էին զօրք
աշխարհիս մօքք, ոչ ինչ խնայէին սոքա
ի նոսա սատակմամբ »։ Առաջադրում եմ
կարդալ « զի եթէ էին զօրք աշխարհիս
մօտք »։ Մոզպետն անգէն մարդկանց դի-
ցազնական կոխն տեսնալով, որոց հա-
մար կ'ասէ. « Մարդք ... մահ քան զկեանս
ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց
լինել թէ և զօրք աշխարհիս այսինքն
պարսից մեզի մօտք էին », նոքա ալ չէին
կրնար խորտակել Հայերու միացեալ ոյ-
ժերը։

Էջ 104. տող 13. « Արդ դու որ մարգ-
պանդ ես... զմիարանութիւն յոնորեալսն »։
Հաւանական Թուի ուղղել՝ մարդկանս ։
Դարձեալ մոզպետն է որ մարգպանին յան-
դիմանութիւն կու տայ թէ դու պարտա-
կան էիր իմացնել գրով և ճշգումբեամբ
թագաւորին այս մարդկանց միարանորի-
նը, որ արքունի հրամանը ոչինչ համա-
բեցան։ « Ես ահա անտեղեակ էի անքակ
ուխտի եկեղեցւոյդ ի միմեանց ... դու ...
հշմարտեալ գիտէիր զպնդութիւն մարդ-
կանդ », և այլն։

Իջ 112. տող 14. « Եւ զգունդն յերիս բաժանեալ ի բանակն արկունէին » : — Ուղղելի. տակունէին : Իրենք են յարձակողները և ոչ թէ քննչին տարան լցին բանակը :

Իջ 138. տող 1. « Եւ քանզի... զոռհիկս... հարեալ էր... Թուի ուղղելի « հաւտեալ էր » : Ձմեռ ժամանակ շատ հաւանաւան էր որ պակսեր է զօրաց ոռհիկը, ուստի մի տեղ չէր կրնար պահել, այլ սիրեք և տարածէր զաւանդներու մէջ՝ հանգիստ ձմերելու համար :

Իջ 142. տող 20. « Զինչ ինչ փաստ գործեալ է իմ, և զոր յանգս յանգեցեալ կամ առ ազգս » : Յազկերտ ինք իր անձի վերայ անդրադառնալով կը հարցնէ ինքն-իրեն. ես ի՞նչ փաստ կամ ի՞նչ յանցանք գործեր եմ մէկի մը, ուստի « յանցս » կարդալու է « յանցս յանցեցեալ » : Տես էջ 144. տող 23. « և զփաստ յանցանացն արկանէր զմոզպետաւն և զմոզօքն » :

Իջ 319. տող 13. « Եւ այսպէս տագնապեալք և ցնորեալք մինչեւ այր զընկեր ի փախուստ չգիտէր ընդ որ երթայր » : Առաջարկում եմ կարդալ « մինչեւ այր զընկերի փախուստ չգիտէր ընդ որ երթայր » :

ԲԱՆ ԽԱՏՈՒ ՅԱՂԱԳԻ ՄԻԱՆՁԱՆՑ

Իջ 363. տող 7. « Ոչ իրեւ չարակնելով նախանձուտը փախուցեալք ի բազմամարդոյ աղբատաց, այլ զի տեսանեն... Լաւագոյն է « բազմամարդոյ բաղադր » ընթերցումը : Եղիշէ խօսելով միանձանց վերայ կ'ասէ որ նորա կը հեռանան հայրենիքէն և քաշուին անապատները, ոչ եւ թէ բազմամարդ քաղաքները ատելուն համար, այլ անոր համար որ աշխարհս լի է չարիքներով :

Իջ 365. տող 9. « Եւ ընդ այսու երկու մասամբս նահանգին ամենայն զգալութիւնքս » : Ուղիղ ընթերցումն թուի « նահանգ » : Զի Եղիշէ ասէ որ երկուք են պատուականագոյն կարողութիւնք մարդոյ՝ կենդանական և խոհական : Արդ ձախը

« զերասանակն ի ձեռն առեալ և զաջ ձեռն խոհականին սպաս ունի » : Այդ երկու կարողութիւնք մարմնոյ բոլոր զգալութիւնքը նախաձեռն են իրենց և հնազանդեցնում, այսինքն « աչք յուղիղ տեսութիւն » : Երասանակն և սպաս ունենալ նախաձեռն համար են և ոչ նահանգիկոյ :

ՓՈՒՆԵԼԻ ԿԻՏԱԿՈՒԹԻՒՆՔ

Իջ 6. « Յիմաստութիւն երկնաւոր » : « Յիմաստութիւն երկնաւոր՝ սիրոյ » :

Իջ 26. տող 8. « Այլ որ մեծն է քան զամենայն թագաւոր » : « Այլ որ մեծն է քան զամենայն թագաւոր, եթէ ոչ ունի զիմաստութիւն » :

Իջ 29. տող 10. « Եւ զի՞ մի մի թուցեմ, այլ » : « Եւ զի՞ մի մի թուցեմ այլ, զամենայն զանաւորմանս ». այսինքն ալ ի՞նչ մէկ մէկ ասեմ կամ պատմեմ, ամեն անաւորմաները յառաջ էր տանում :

Իջ 50. տող 7. « Եւ անուն է նորա արարիչ երկնի և երկրի. իսկ յառաջ քան » : « Եւ անուն է նորա արարիչ երկնի և երկրի՝ իսկ. յառաջ քան զերկին » : Այսինքն աւոր բուն, իսկական անունն է արարիչ երկնի և երկրի, երկնքէն և երկրէն կանուխ եղած :

Իջ 50. տող 25. « Իւրաքանչիւր մասանց տեսակքն. իսկ մարդկան » : « Մասանց տեսակքն իսկ. մարդկան և հրեշտակաց են տեսակքն » :

Իջ 53. տող 25. « Բանիւ ծնունդ ի մացիր զարարածս իսկ քանզի » : « զարարածս իսկ. քանզի » :

Հ. ԳԱՐԻԲԵԼ ՆԱԱԳՈՅՏԵԱՆ

1. Այս դարձուած առաւել Եզնկայ թուի, որ վրեպիք է և այլոր ընթերցողաց աչքէն և մտքէն :